ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՄՎԵԼԻ ԹԱՄՈՅԱՆ

ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐՏԵՆԲԵՐԳԻ ՀՈՂԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ)

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Գիտական ղեկավար տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդուարդ Սերգեյի Ղազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ

Առաջատար կազմակերպություն

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2019 թվականի .....-ին, ժամը .....-ին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ԲՈՀ-ի տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փողոց, 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թվականի .....-ին:

002 Մասնագիտական խորհրդի
գիտ. քարտուղար, դոցենտ Վ. Ս. Ալեքսանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Ատենախոսության թեմայի արդիականությունը:</u> Խաղողագործությունը ՀՀ ագրոպարենային համակարգի առանցքային ճյուղերից մեկն է և ունի կարևոր տնտեսական նշանակություն: Դրա զարգացման մակարդակից կախված է երկրի տնտեսության համար կենսական նշանակություն ճյուղերի՝ ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրության կենսունակությունը:

Խաղողագործության զարգացման համար անչափ կարևոր է գինեգործական արտադրության հումք՝ խաղող արտադրող տնտեսավարողների հետ հարաբերությունների կատարելագործումը, երաշխավորելով միջազգային շուկայում բարձրորակ արտադրանքով ներկայանալու, բարձր մրցունակություն ապահովելու հնարավորությունը: Դրան հասնելու համար անհրաժեշտ է խաղողագործության և գինեգործության ոլորտների արդյունավետ ինտեգրման և փոխկապակցված զարգացման կառուցակարգերի մշակում և ներդրում:

ՀՀ-ում խաղողագործությունը ներկա վիճակին բնորոշ է արտադրական գործընթացների ինտենսիվացման ցածր մակարդակը, արտադրողների ֆինանսական անկայունությունը, արտադրա-տնտեսական ռիսկերի բարձր մակարդակը, այդպիսով՝ խաղողագործության արտադրական ցուցանիշների բացասական միտումները: Այս խնդրի լուծումը պահանջում է ենթակառուցվածքների բարելավման արդյունավետ գործընթացների իրականացում և դրանց առաջադրման հիմնարար կառուցակարգերի մշակում:

Արդյունաբերական խաղողագործության արտադրական կառուցվածքի բարդությունը, ինչպես նաև ներքին ու արտաքին գործոնների փոփոխվող ազդեցություններին հարմարվողականության մակարդակի բարձրացման կառուցակարգերը պահանջում են այդ արտադրական համակարգի խորը և համակողմանի տնտեսական վերլուծություն, դրա բարելավման համար գիտականորեն հիմնավորված մոտեցումների մշակման նպատակով:

Ներկայումս Հայաստանում, նաև Վայոց ձորի մարզում, տևական ճգնաժամից հետո խաղողագործության և գինեգործության զարգացման նոր փուլում, առաջնային խնդիր է ոլորտի զարգացմանը խոչընդոտող գործոնների բացահայտումը և դրանց հաղթահարման կառուցակարգերի մշակումը:

Խաղողագործության զարգացման և ներքին ու արտաքին շուկաներում խաղողագինեգործական արտադրանքի մրցունակության բարձրացման նպատակով անչափ կարևոր է խաղողագործության և գինեգործության ճյուղերի արդյունավետության բարձրացումը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u> Հետազոտության նպատակը ՀՀ Վայոց ձորի մարզի և ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգի հողի խաղողագինեգործության վիճակի վերլուծության և առկա խնդիրների բացահայտման հիման վրա ՀՀ Վայոց ձորի խաղողագործության զարգացմանն ուղղված առաջարկությունների և կիրառվելիք միջոցառումների մշակումն է, որոնք առկա ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործմամբ կնպաստեն մարզում խաղողագործության զարգացմանը:

Նպատակի իրագործման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել ՀՀ խաղողագործության զարգացման առկա միտումները և գնահատել խաղողագինեգործական արտադրանքի տնտեսական նշանակությունը,
- վերլուծել ԳԴՀ և ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգի հողի խաղողագործության զարգացման երկարաժամկետ միտումները, գնահատել զարգացման դինամիկան,
- ուսումնասիրել մարզի գյուղատնտեսության ռեսուրսային ներուժը և բացահայտել դրա օգտագործման հիմնահարցերը,
- ուսումնասիրել և վերլուծել մարզի խաղողագինեգործության արդի վիճակը,
- բացահայտել մարզում խաղողագործության և գինեգործության զարգացման սոցիալ-տնտեսական նշանակությունը,
- մշակել խաղող արտադրող տնտեսությունների և վերամշակող կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների բարելավման կառուցակարգեր,
- վերլուծել ՀՀ խաղողագինեգործական արտադրանքի շուկայի վիճակն ու առկա միտումները,
- ուսումնասիրել խաղողագինեգործական արտադրանքի գնագոյացման կառուցակարգերն ու առանձնահատկությունը ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգի հողում,
- ուսումնասիրել ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգի հողի խաղողագինեգործության ոլորտին ուղղվող պետական աջակցության մակարդակը և առաջադրել պետական քաղաքականության իրականացման առաջնահերթությունները ՀՀ Վայոց ձորի մարզում,
- ուսումնասիրել ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգի հողի խաղողագինեգործության ոլորտի զարգացման փորձը, ինովացիաների կիրառումը և գնահատել ՀՀ Վայոց ձորի մարզում դրաց ներդրման հնարավորությունները,
- մշակել մարզի խաղողագինեգործական արտադրանքի իրացման համակարգի կատարելագործման արդյունավետ կառուցակարգեր,
- բացահայտել ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման հիմնախնդիրները
- առաջադրել ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման հիմնական ուղղությունները:

<u>Հետազոտության առարկան և օբյեկտը</u>: Հետազոտության օբյեկտը ՀՀ Վայոց ձորի մարզի և ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգի հողի խաղողագործական տնտեսությունները և խաղողագինեգործական արտադրանքի շուկան է: Հետազոտության առարկան խաղող արտադրող տնտեսությունների ֆինանսական, նյութատեխնիկական ապահովման, ենթակառուցվածքների կատարելագործման, խաղող արտադրող և վերամշակող տնտեսվարող սուբյեկտների՝ փոխհարաբերությունների, խաղողագինեգործական արտադրանքի շուկայի կարգավորման հիմնահարցերն են:

<u>Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը</u>: Խնդիրների լուծման համար տեսական հիմք են ծառայել արտերկրի և հայ տնտեսագետների աշխատություններ՝ նվիրված խաղողագինեգործության արտադրատնտեսական հարաբերություններին, տնտեսվարող սուբյեկտների փոխհարաբերություններին, ոլորտում առկա խնդիրների վերլուծության և ոլորտի զարգացման հար-

ցերին: Կիրառվել են հետազոտական ընդհանուր գիտական մեթոդներ՝ ինդուկցիա, դեդուկցիա, դասակարգումներ, ընդհանրացումներ, խմբավորումներ, կառուցվածքային նկարագրության, տրամաբանական և տնտեսամաթեմատիկական մոդելավորման, բազմագործոն, համեմատական և տնտեսաչափական վերլուծություններ:

Հետազոտության համար հիմք են ծառայել առկա օրենսդրական և նորմատիվային ակտերը, ազգային վիճակագրական ծառայության տվյալները, որոնք վերաբերում են ՀՀ-ի, Վայոց ձորի մարզի և ԳԴՀ-ի ու Բադեն-Վյուրտենբերգի հողի խաղողագինեգործական արտադրության դինամիկային, մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություններն ու վերլուծական նյութերը, միջազգային կազմակերպությունների տեղեկագրերը և տեղեկատվական նյութերը: Որպես տեղեկատվական հիմք՝ օգտագործվել են ատենախոսական հետազոտություններում, մենագրություններում, գիտական հոդվածներում, պարբերականներում, հաստատությունների տեղեկատվական և վերլուծական նյութերում առկա տվյալները, տարբեր գիտնականների և հետազոտողների փորձագիտական վերլուծությունները և հետազոտությունները, համացանցի հրապարակած պաշտոնական տեղեկատվությունը:

<u>Ատենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները</u>: Ատենախոսական հետազոտություններից ու վերլուծություններից ստացված մի շարք գիտական արդյունքներից գիտական նորույթ կարելի է համարել.

- ԳԴՀ-ի և Բադեն-Վյուրտենբերգի հողի, ինչպես նաև ՀՀ-ի և Վայոց ձորի մարզի խաղողագործության ճյուղի հիմնական ցուցանիշների դինամիկայի վերլուծության և դրանց ժամանակային շարքերի տրենդների մոդելավորման հիման վրա բացահայտվել են զարգացման միտումները:
- Բացահայտվել է ԳԴՀ և Բադեն-Վյուրտենբերգի հողի, ինչպես նաև ՀՀ և Վայոց ձորի մարզի խաղողի համախառն բերքի վրա այգետարածքների ու բերքատվության մակարդակի ազդեցության աստիճանը և տրվել է դրանց տնտեսաչափական գնահատականը:
- ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության ոլորտում կատարված ուսումնասիրությունների և SWOT վերլուծության արդյունքով բացահայտվել են ոլորտի արդի հիմնախնդիրները և պայմանավորող գործոնները:
- Վայոց ձորի մարզի խաղողագործության ոլորտում առկա հիմնախնդիրների և մարզում խաղողագործության զարգացման բնատնտեսական ու ռեսուրսային ներուժի համակողմանի գնահատման ու վերլուծության հիման վրա մշակվել են ոլորտի հեռանկարային զարգացման հիմնական ուղղությունները:

<u>Հետազոտությունների արդյունքների գործնական նշանակությունը</u>:

Հետազոտության արդյունքների և առաջարկվող կառուցակարգերի գործնական կիրառությունը կնպաստի ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացմանը և արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսության հիմնական դրույթները կարող են օգտագործվել խաղողագինեգործության ոլորտին առնչվող տնտեսագիտական գիտահետազոտական աշխատանքներում, որպես խաղողագինեգործական համալիրի արտադրա-տնտես-

ական հարաբերությունները կարգավորող գիտա-մեթոդական բազա՝ նորմատիվ իրավական փաստաթղթերի համար:

Աշխատանքի պարունակած մեծածավալ վիճակագրական տվյալները և վերլուծությունները նյութերը կարող են օգտագործվել ՀՀ գյուղատնտեսության ոլորտը կարգավորող նախարարության, ինչպես նաև ՀՀ Վայոց ձորի մարզի մարզպետարանի կողմից խաղողագործության ոլորտում համապատասխան քաղաքականության մշակման գործում:

<u>Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները</u>: Ատենախոսության հիմնական դրույթները, հետազոտությունների արդյունքներն ու առաջարկությունները ներկայացվել ու քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրարային էկոնոմիկայի, Ագրոբիզնեսի կառավարման և ագրարային քաղաքականության ամբիոնների համատեղ նիստում, արդյունքները հրապարակվել են 8 գիտական հոդվածներում:

<u>Հետազոտության ծավալը և կառուցվածքը</u>: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից: Շարադրված է 159 էջ ծավալով, պարունակում է 17 աղյուսակ, 12 նկար և 21 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

<u>Ներածությունում</u> է ներկայացված է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսական, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթն ու արդյունքները, դրանց գործնական նշանակությունը, փորձարկումն ու հրապարակումները, հետազոտության ծավալն ու կառուցվածքը:

<u>Ատենախոսության առաջին՝ «Խաղողագինեգործական համալիրի վիճակը և զարգացման հիմնա_հարցերը Հայաստանի Հանրապետությունում</u>» գլխում ներկայացված է ՀՀ խաղողագործության վիճակը և զարգացման միտումները, խաղողագինեգործական արտադրության սոցիալ-տնտեսական նշանակությունը: 2007-2018թթ. խաղողի այգետարածքի, համախառն բերքի և բերքատվության ցուցանիշների դինամիկան բերված է գծապատկեր 1-ում:

Վերլուծությունից պարզվում է, որ 2007-2016թթ. խաղողի այգետարածքների միջին ցուցանիշը 1991-2000թթ.-ի համեմատ էապես կրճատվել է: Սակայն վերջին 10 տարիներին գրեթե չի փոխվել, բայց 2017թ. նախորդ տարվա համեմատ կրճատվել է շուրջ 1300 հա: 2008-2015թթ. համախառն բերքի ցուցանիշն ունեցել է հիմնականում աճի միտում, ինչով էլ պայմանավորված է նաև բերքատվության միջին մակարդակի աճը (տարածքները չեն փոփոխվել): 2016թ. բերքատվության և համախառն բերքի կտրուկ անկումը հետևանք է ցրտահարության և կարկտահարության, իսկ 2017թ. թեև այգետարածքները կըրճատվել են, գրանցված համախառն բերքի կտրուկ աճը բարենպաստ կլիմայական պայմանների և խնամքի արդյունք է: 2018թ. թեև այգետարածքներն աճել են շուրջ 300 հա, համախառն բերքի և բերքատվութ-

յան մակարդակը նկատելի ընկել է, պայմանավորված՝ եղանակային անբարենպաստ պայմաններով և անբավարար խնամքով:



Գծապատկեր 1. Խաղողի այգիների տարածությունը, համախառն բերքը և բերքատվությունը ՀՀ-ում 2007-2018**թթ.** (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության 2008-2019թթ. տարեգրքեր)

Այսպիսով, ՀՀ տնտեսության զարգացման համար կենսական նշանակություն ունեցող խաղողագործության զարգացման տեմպերը խիստ անկայուն են, ինչը վկայում է ոլորտում առկա բազում հիմնախնդիրների մասին:

Հայաստանում խաղողի այգետարածքները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2018թ., ըստ մարզերի և Երևան քաղաքի, ներկայացված է աղյուսակ 1-ում: Այգետարածքով ՀՀ-ում առաջատարն Արմավիրին է՝ 41.8%, որը երկրորդ ցուցանիշով Արարատի մարզին գերազանցում է շուրջ 1.4 անգամ: Այդ երկու մարզերի մասնաբաժինը հանրապետության ընդհանուր խաղողի այգետարածքների կառուցվածքում կազմում է շուրջ 71.7%, 3-րդ, 4-րդ և 5-րդ տեղերը զբաղեցնում են Արագածոտնի, Տավուշի և Վայոց ձորի մարզերը, համապատասխանաբար՝ 9.7, 7.9 և 6.8%: Խաղողի այգիներ ունեցող մյուս մարզերին (Կոտայք, Սյունիք, Լոռի և Երևան) բաժին է ընկնում ընդամենը 2.9%-ը: Շիրակում և Գեղարքունիքում ընդհանրապես չկան՝ անբարենպաստ բնակլիմայական պայմաններով պայմանավորված:

Բերքատվության մակարդակով ևս առաջատարն Արարատի մարզն է, որի ցուցանիշը գերազանցում է Վայոց ձորին և Արագածոտնին՝ շուրջ 3 անգամ, Տավուշին՝ 2 անգամ: Խաղողի համախառն արտադրանքի կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը Արմավիրի մարզին է՝ 47.5%, իսկ Արարատի մարզին՝ 39.1%: Փաստորեն, միայն Արմավիրի և Արարատի մարզերը միասին ապահովում են ՀՀ խաղողի համախառն արտադրանքի շուրջ 86.6%-ը:

Նույն գլխում ներկայացվել են նաև ՀՀ խաղողագինեգործական արտադրության սոցիալ-տնտեսական նշանակության վերաբերյալ հիմնավոր ուսումնասիրություններ ու համակողմանի վերլուծություններ:

Աղյուսակ 1.

Խաղողի այգետարածքները, համախառն բերքը և միջին բերքատվությունը ըստ ՀՀ մարզերում (2018թ.) (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2018 թվականին, Երևան 2019թ.)

	Տարածությունը, հա		Համախառն բերքը, ց		1 հա միջին բերքատվությունը, ց
	ընդամենը	որից՝ պտղատու հասակի	ընդամենը	որից՝ պտղատու հասակի	
ք. Երևան	96	96	3100	3100	32.3
Արագածոտն	1451	1451	74451	74451	51.3
Արարատ	4647	4470	703102	701852	157.0
Արմավիր	6924	6246	853748	853685	136.7
Լոռի	67	67	1460	1460	21.8
Կոտայք	156	100	2261	2261	22.6
Սյունիք	180	180	4834	4834	26.9
Վայոց ձոր	1214	1014	54558	54558	53.8
Տավուշ	1364	1325	99167	99167	74.8
ՀՀ	16099	14949	1796681	1795368	120.1

Աղյուսակ 2.

ՀՀ-ում գինու և կոնյակի արտադրության, արտահանման, ներմուծման, ինքնաբավության մակարդակը և իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը 2015-2017**թթ.** (http://minagro.am/ Ագրովերամշակում)

Արտադրանքը	**Տարեթվերը**		
	2015թ.	**2016թ.**	**2017թ.**
Տեղական արտադրություն /հազ. լիտր/			
Գինի	6590.0	7523.0	9716.3
Կոնյակ	16037.5	21529.2	30040.6
Արտահանում /հազ. լիտր/			
Գինի	1451.6	1855.2	2791.8
Կոնյակ	15807.8	20518.8	28313.8
Ներմուծում /հազ. լիտր/			
Գինի	312.1	272.2	551.0
Կոնյակ	6.5	5.5	93.0
Ինքնաբավության մակարդակը /%/			
Գինի	120.9	126.6	130.0
Կոնյակ	6789.8	2119.2	1650.8
Իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը /%/			
Գինի	94.3	95.4	92.6
Կոնյակ	97.2	99.5	94.9

ՀՀ-ում գինու և կոնյակի արտադրության, արտահանման, ներմուծման, ինքնաբավության մակարդակը, ինչպես նաև իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը 2015-2017թթ. ներկայացված է աղյուսակ 2-ում: Ըստ

այդմ, վերջին 3 տարիներին գինու և կոնյակի տեղական արտադրության և արտահանման ցուցանիշներն աճի միտում են ունեցել: Ուշագրավ է, որ 2015-2017թթ. արձանագրվել է գինու և կոնյակի ներմուծման ծավալների բնեղեն արտահայտությամբ աճ, իսկ իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը կրճատվել է: Մեր գնահատմամբ, դա արդյունք է գինու և կոնյակի շուկայի բարձր գնային սեգմենտում ներկրված արտադրանքի ուղղությամբ սպառողական նախընտրության փոփոխության:

<u>Ատենախոսության երկրորդ՝ «Խաղողագործության զարգացման նախադրյալները ՀՀ Վայոց ձորի մարզում»</u> գլխում ներկայացվել են ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության ռեսուրսային ներուժը և դրա օգտագործման հարցերը, մարզի խաղողագինեգործական համալիրի ուսումնասիրությունը, գնահատվել է խաղողագործության զարգացման համար մարզի բնատնտեսական պայմանները:

Խաղողի տեխնիկական սորտերից ամենատարածվածը մարզում Արենի ուշահաս տեխնիկական սորտ է (տեսակարար կշիռը ընդհանուր այգետարածքների կառուցվածքում շուրջ 70%), օգտագործվում է սեղանի գինիների և հյութերի արտադրության մեջ: Արենին՝ մարզի բարենպաստ բնակլիմայական պայմանների շնորհիվ, փաստորեն աճում է միայն Վայոց ձորում մինչև 1560 մ բարձրություններում: Այդ խաղողը բացառիկ արժեքավոր գինեհումք է և ամբողջ հանրապետությունում վերամշակող կազմակերպությունների կողմից մեծ պահանջարկ ունի, մթերվում է ամենաբարձր գներով և ապահովում է բարձր տնտեսական արդյունավետություն: Բացի այդ, հայտնի է, որ գիտականորեն՝ հիմնավորված, մասնավորապես ըստ բնատնտեսական պայմանների տեղաբաշխումը բերում է արտադրության ծավալների ավելացման, նաև հանդիսանում է ինքնարժեքի օպտիմալացման կարևորագույն ռեզերվներից մեկը: Հետևաբար, գտնում ենք, որ մարզում խաղողագործության հետագա զարգացումը պետք է ուղղված լինի Արենի սորտի այգետարածքների ընդլայնմանը և տեխնոլոգիական գործոնների կատարելագործմանը: Կարևոր է նաև մարզում մի շարք վերամշակող կազմակերպությունների առկայությունը:

Ատենախոսության այս գլխում կատարված են նաև ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի և դրա օգտագործման հիմնահարցերի համակողմանի վերլուծություն: Պարզվում է, մարզում գյուղատնտեսության հիմնական ռեսուրսներին առնչվող լրջագույն խնդիր կա: Հողօգտագործման վիճակն կարելի է գնահատել խիստ անբավարար, քանի որ ցածր է գյուղատնտեսական հիմնական հողատեսքերի օգտագործման մակարդակը, այդ թվում՝ վարելահողերի: Վերջինս, բացի հողային և ռելիեֆային ոչ նպաստավոր պայմանների, անջրդի երկրագործության, ոռոգման համակարգերի մաշվածության և պիտանելիության ցածր մակարդակի, արդյունք է նաև համապատասխան քանակով և տեխնիկական բնութագրերով գյուղտեխնիկայի բացակայության: Այս առումով կարևոր է նաև մարզի աշխատանքային ռեսուրսների կառուցվածքային փոփոխությունների միտումը, մասնավորապես աշխատանքային ռեսուրսների ընդհանուր զբաղվածության կառուցվածքում գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության տեսակարար կշիռի նվազումը, որպես հետեվանք այն բանի, որ աստիճանաբար գյուղատնտեսությունը

դառնում է ոչ գրավիչ ոլորտ: Այդուհանդերձ, գյուղատնտեսական՝ մասնավորապես խաղողի արտադրանքով գործող մշակող արդյունաբերությունը հանդիսանում է մարզի տնտեսության առանցքային ոլորտը:

Ելնելով վերոնշյալից՝ գտնում ենք, որ Վայոց ձորի մարզում գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների օգտագործումը բարելավելու համար անհետաձգելի է համալիր միջոցառումների իրականացումը, հիմնված՝ բնատնտեսական պայմանների նպաստավորության համապատասխան գյուղատնտեսության գերակայությունների վրա: Մասնավորապես, կարևոր է պետական նպատակաուղղված քաղաքականության իրականացումը՝ համապատասխան աջակցության ծրագրերի գործիքակազմով, ըստ ուղղությունների.

- գյուղատնտեսության նախընտրելի մասնագիտացման կատարելագործում,
- հողաբարելավում, հատկապես քարքարոտ և անհարթ տարածքներում,
- ոռոգման համակարգերի վերականգնում և արդիականացում, ընդլայնում:

Ատենախոսության տվյալ գլխում ներկայացվել է նաև Վայոց ձորի մարզի խաղողագինեգործական համալիրի վիճակի համակողմանի ուսումնասիրությունը: Այս առումով կարևոր ենք համարել մարզի խաղողի այգետարածքների, միջին բերքատվության և համախառն բերքի ցուցանիշների ուսումնասիրությունն ու վերլուծությունը: Նպատակահարմար ենք համարել դիտարկել խաղողագործության զարգացման երկարաժամկետ՝ վերջին 15 տարվա դինամիկան (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողի այգիների տարածությունները 2002-2018թթ., հա (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Վիճակագրական ժողովածուներ: ՀՀ մարզերը և Երևանը թվերով 2003, 2008, 2012, 2018թթ.)

Պարզվում է՝ այգետարածքների ցուցանիշն ունեցել է ընդգծված աճի միտում: Ընդ որում, բեկումնալի է եղել 2004 թ., երբ նախորդ տարվա համեմատ այդ ցուցանիշն ավելացել են 47,1%, ինչը հանրապետության և մարզի կտրվածքով նոր հողային հարաբերություններում ամենաբարձր ցուցանիշն է: 2002–2015թթ. մարզում խաղողագործության մեծ զարգացման մասին է վկայում այգետարածքների դինամիկ և կայուն աճը, մասնավորապես՝ 2002թ. նկատմամբ 2018թ.-ին դրանք ավելացել են 1,8 անգամ, ինչը մեր գնահատմամբ բարձր ցուցանիշ է և կարող է խաղողագործության հետագա զարգացման համար հանդիսանալ կարևոր նախադրյալ և ուղենիշ:

Մարզում խաղողագործության զարգացման մասին է վկայում նաև խաղողի բերքատվության մակարդակի, ինչպես նաև համախառն բերքի ցուցանիշների վերլուծության արդյունքները, որոնց վերաբերյալ տվյալները ներկայացված են համապատասխանաբար՝ գծապատկերներ 3-ում և 4-ում:



Գծապատկեր 3. ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողի համախառն բերքը 2002-2018**թթ.**, **հա** (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Վիճակագրական ժողովածուներ: ՀՀ մարզերը և Երևանը թվերով 2003, 2008, 2012, 2018թթ. տարեգրքեր:)



Գծապատկեր 4. ՀՀ-ում և ՀՀ Վայոց ձորի մարզում խաղողի այգիների միջին բերքատվությունը 2002-2018**թթ.**, **գ/հա** (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Վիճակագրական ժողովածուներ: ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2003, 2008, 2012, 2017, 2018թթ. տարեգրքեր:)

Դրանցից երևում է, որ միջին բերքատվության աճով պայմանավորված, և դրան համահունչ ավելացել է նաև խաղողի համախառն բերքը: Բերքատվության բարելավման միտում է արձանագրվել 2004թ. սկսած, միջին բերքատվության համար այդ միտումն առավել ցայտուն է ուսումնասիրվող ժամանակամիջոցի առաջին և վերջին հինգ տարիներին: 2013-2018թթ. մարզում խաղողի միջին բերքատվությունը 2002-2006թթ. համեմատ աճել է 30.7%:

Այսպիսով, Վայոց ձորում խաղողի այգետարածքների, միջին բերքատվության և համախառն բերքի ցուցանիշների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ մարզում խաղողագործությունը վերջին տարիներին կայուն զարգանում է: Բացի

այդ, ըստ զարգացման դինամիկայի, մարզն ունի դրա մեծ ռեզերվ և լուրջ նախադրյալներ, որոնց արդյունավետ օգտագործումը, մեր գնահատմամբ, միջնաժամկետ հեռանկարում կապահովի խաղողագործության զարգացման ցանկալի մակարդակ, էապես բարձրացնելով ռեսուրսաօգտագործման արդյունավետությունը: Դա չափազանց կարևոր է նաև մարզի գյուղացիական տնտեսությունների շրջանում խաղողագործությամբ զբաղվելու գրավչության մակարդակի բարձրացման առումով:

ՀՀ խաղողի այգետարածքների և համախառն բերքի կառուցվածքում Վայոց ձորի մարզի մասնաբաժինների դինամիկայի վերլուծությունը վկայում է, որ մարզում այգնտարածքների տեսակարար կշիռները տարեց տարի աճել է, 2018 թ. դրությամբ հասնելով ամենաբարձր՝ շուրջ 6.8%-ի: Համեմատության համար՝ 1975-1980թթ. այգետարածքների ռեկորդային 1191 հա ցուցանիշը կազմել է հանրապետության խաղողի ընդհանուր այգետարածքների կառուցվածքի ընդամենը 3.3%-ը, այսինքն 1975 -1980թթ. միջին ցուցանիշի համեմատ՝ 2018 թ. աճը կազմել է շուրջ 3.5%:



Գծապատկեր 5. ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողի այգետարածքների և համախառն բերքի մասնաբաժինների դինամիկան ՀՀ խաղողի այգետարածքների և համախառն բերքի կառուցվածքում 2002-2017**թթ., հա** (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: Վիճակագրական ժողովածուներ: ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2003, 2008, 2012, 2017թթ. տարեգրքեր, Արտյոնյան Ա. Ֆ. Природная среда армянского вина. Мезо – и микроклимат. Почвенный покров. Системная оценка потенциала. – Ер.: Авторское издание, 2009. – с. 160)

Այսպիսով՝ մարզում խաղողի այգետարածքները հանրապետության միջին ցուցանիշներից ավելանում են առաջանցիկ տեմպերով, ինչը ևս վկայում է, որ խաղողագործության զարգացման համար լուրջ ներուժ ունի մարզը, որը գնալով ավելի կարևոր տեղ է զբաղեցնում երկրի խաղողագինեգործական համալիրում (գծ. 5):

ՀՀ խաղողի համախառն բերքի կառուցվածքում մարզի խաղողի համախառն բերքի տեսակարար կշռը բարելավվել է սկսած 2004 թ.-ից՝ նախորդ տարիների 1% ցուցանիշից հասնելով 2,1%-ի, որի ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2013 թ.-ին՝ 2,2%, իսկ դրան հաջորդող՝ 2014-2016թթ. կայուն անկում է գրանցվել, սակայն 2017-2018թթ. արձանագրվել է կայուն աճ:

Վերջինս, չնայած խաղողի այգետարածքների ավելացմանը, պայմանավորված է միջին հանրապետականի նկատմամբ մարզում խաղողի բերքատվության մակարդակի աճի ցածր տեմպերով: Դա հետևանք է եղանակային անբարենպաստ տարիների և մի շարք այլ գործոնների, այդ թվում՝ խաղողի այգիների նոսրության, մաշվածության բարձր մակարդակի և կիրառվող անբավարար ագրոտեխնիկական միջոցառումների:

<u>Ատենախոսության երրորդ՝ «խաղողագործության զարգացման հեռանկարները ՀՀ Վայոց ձորի մարզում»</u> գլխում կատարված SWOT վերլուծությամբ ներկայացվել են ՀՀ Վայոց ձորի խաղողագործության զարգացման խնդիրները: Բացի այդ՝ կատարվել է ՀՀ Վայոց ձորի մարզի և ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգի հողի խաղողագործության հիմնական ցուցանիշների տնտեսաչափական վերլուծություն, նախանշելու՝ Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման ուղղությունները:

Վայոց ձորի մարզի խաղողագինեգործական ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների արտադրատնտեսական գործունեության վրա էական ազդեցություն ունեցող արտաքին և ներքին միջավայրերի գործոնների համակողմանի ուսումնասիրության նպատակով կարևոր ենք համարել SWOT վերլուծությունը: Դրա իրականացման համար հիմք են հանդիսացել մարզում ոլորտի տնտեսավարող սուբյեկտների շրջանում մեր կողմից կատարված հարցումների, հետազոտությունների և տարբեր մասնագիտական ու գիտական հրապարակումների վերլուծության արդյունքները: Այդ հետազոտություններ թույլ են տալիս բացահայտվելու մարզի խաղողագինեգործական համալիրի ուժեղ և թույլ կողմերը, առկա սպառնալիքների համատեքստում համակողմանիորեն գնահատելու զարգացման հնարավորությունները:

Խաղողագործության ոլորտի զարգացման արդի հիմնախնդիրներից է խաղողի բերքի իրացումը, պայմանավորված՝ դրան նպաստող կառույցների գործունեության վիճակով: Ճյուղի դինամիկ զարգացման վրա էական ազդեցություն է ունի նաև խաղողի ապրանքայնության մակարդակը, որը ՀՀ-ում գուղատնտեսական արտադրանքների շարքում համարվում է ամենաբարձրներից մեկը՝ շուրջ 90%: Խաղողի սեղանի և ունիվերսալ սորտերի ապրանքայնության մակարդակի վրա էական ազդեցություն է ունենում նաև արտադրանքի պահպանման առնչվող խնդիրները:

Վայոց ձորի մարզում արտադրված խաղողն իրացվում է ուղղակի և անուղղակի բաշխման ուղիներով՝

- իրացում արտադրողների կողմից գյուղատնտեսական մթերքների շուկայում,
- իրացում միջնորդ կազմակերպություններին կամ անհատ միջնորդներին,
- իրացում վերամշակող կազմակերպություններին,
- իրացում արտահանող կազմակերպություններին և անհատ տնտեսավարողներին:

Մարզում խաղողագործության զարգացմանն էապես խոչընդոտում է խաղողի այգետարածքների չափազանց փոքր չափերը, որոնք արդյունավետ տնտեսվարման և արտադրատնտեսական գործունեության պատշաճ իրականացման, բարձր արդյունավետության հնարավորություն չեն տալիս: Համայնքներում խաղող արտադրող տնտեսությունների բաշխվածությունն ըստ այգետարածքների չափերի խիստ տարբեր է: Մասնավորապես, մարզի 12 համայնքներում շուրջ 1950 խաղող արտադրող

տնտեսություններից 984-ը բաժին է ընկնում Աղավնաձոր (372), Գլաձոր (322) և Արենի (290) համայնքներին: Ընդ որում, Գլաձոր համայնքի 322 խաղող արտադրող տնտեսություններից 231-ը կամ 71,7%-ը ունեն 0,1 հա-ից էլ պակաս այգետարածք:

Այսպիսով՝ վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզում խաղողագործության զարգացման էական խոչընդոտներից մեկը խաղող արտադրողների այգետարածքների չափազանց փոքր չափերն են: Փաստորեն, մարզում խաղողագործական տնտեսությունների ընդհանուր թվի շուրջ 56,4%-ը արտադրություն են իրականացնում մինչև 0,2 հա տարածքով խաղողի այգիներում, 28,9%-ը՝ 0,2-0,49 հա, 13%-ը՝ 0,5-0,99 հա, իսկ 1-2 հա տարածքով, որի դեպքում կարելի է համեմատաբար արդյունավետ տնտեսավարում իրագործել, խաղողի այգիներ են մշակում խաղողագործական տնտեսությունների ընդամենը 1,5%-ը միայն (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. Վայոց ձորի մարզի խաղող արտադրող տնտեսությունների կառուցվածքը՝ ըստ չափերի, % (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ գյուղատնտեսության համատարած հաշվառում, Երևան, 2014)

Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացմանը խոչընդոտող գործոններից, մեր գնահատմամբ, պակաս կարևոր չէ նաև արտադրական ենթակառուցվածքների անբավարար մակարդակը: Դա առաջին հերթին վերաբերում է ոռոգման համակարգին, որը ԽՍՀՄ տարիներից ի վեր կապիտալ վերանորոգման և արդիականացման չի ենթարկվել: Ոռոգման փակ համակարգերի բացակայությունը ոռոգման արդիական տեխնոլոգիաների, մասնավորապես կաթիլային ոռոգման համակարգի ներդրման հնարավորություն չի ընձեռում:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացվել է նաև ՀՀ Վայոց ձորի մարզի և ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգի Հողի 2006-2018թթ.խաղողագործության հիմնական ցուցանիշների տնտեսաչափական վերլուծությունը, որի արդյունքում բացահայտել է խաղողագործության հիմնական ցուցանիշների զարգացման և փոխկախվածությունների օրինաչափությունները:

Հաշվարկները ցույց են տվել, որ 2006-2018թթ. ՀՀ-ում խողողի համախառն բերքը տարեկան միջին հաշվով կրճատվել է 16262.7ց (0.85%), իսկ Վայոց ձորի մարզում ավելացել է 2133.5ց (5.4%):

2015թ. համեմատ՝ 2016թ. ՀՀ-ում և Վայոց ձորում գրանցվել է խաղողի համախառն բերքի նշանակալի կրճատում: Այդ տարիների համեմատ ՀՀ-ում խաղողի համախառն բերքը կրճատվել է 1298365ց (45.1%), իսկ Վայոց ձորում

37308g (65.4%): Այս բացասական միտումն ուղղակի է անդրադարձել խաղողի բերքատվության միջին մակարդակի փոփոխության վրա: 2015թ. համեմատ՝ 2016թ. ՀՀ-ում խաղողի բերքատվության միջին մակարդակը նվազել է 41.6%-ով, իսկ Վայոց ձորի մարզում՝ 65.9%-ով:

Աղյուսակ 3.

ԳԴՀ-ում և Բադեն-Վյուրտենբերգի Հողի խաղողի տարածությունները և համախառն բերքը 2006-2018**թթ.** (Statistisches Bundesamt, https://www.destatis.de)

Տարիներ	Խաղողի այգետարածքները, հա		Համախառն բերքը, հազ. տոննա	
	ԳԴՀ	Բադեն-Վյուրտենբերգի հող	ԳԴՀ	Բադեն-Վյուրտենբերգի հող
2006թ.	99128	27530	1205.4	458.6
2007թ.	99891	27418	1378.5	355.6
2008թ.	99715	27417	1330.2	342.7
2009թ.	100124	27271	1215.5	312.0
2010թ.	99925	27258	938.3	253.5
2011թ.	99781	27165	1231.3	321.9
2012թ.	99571	27174	1207.8	314.1
2013թ.	99424	27194	1121.5	271.7
2014թ.	100098	27161	1225.2	319.7
2015թ.	99924	27229	1180.1	304.7
2016թ.	100017	27118	1206.2	331.1
2017թ.	100025	27119	1212.1	335.1
2018թ.	100028	27121	1215.0	335.2

Աղյուսակ 3-ում բերված տվյալների վերլուծությունց պարզ է դառնում, որ 2009-2018թթ. ԳԴՀ-ում խաղողի տարածքները տարեկան միջին հաշվով ավելացել են 74.9 հա, իսկ խաղողի համախառն բերքը՝ 800 տ (0.07%): Փոփոխությունների այդ նույն ժամանակահատվածում ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգի հողում խաղողի այգիների տարածությունները տարեկան միջին հաշվով կրճատվել են 34.08 հա կամ 0.12%, իսկ խաղողի համախառն բերքը՝ 10290 տ կամ 2.58%:

Գծապատկեր 7-ի տվյալների համեմատական վերլուծությունից պարզվում է, որ 2006-2018թթ. ՀՀ-ում խաղողի բերքատվության միջին մակարդակը տարեկան միջին հաշվով կրճատվել է 1.75 g/հա (1.34%), ԳԴՀ-ում՝ 0.008 g/հա (0.007%), իսկ Բադեն-Վյուրտենբերգի հողում՝ 3.58 g/հա (2.45%): Ներկայացվածից երևում է նաև, որ 2006-2018թթ. ՀՀ Վայոց ձորի մարզում գրանցվել է խաղողի բերքատվության միջին մակարդակի աճ՝ 2.5%, չնայած այս ցուցանիշով մարզը մի քանի անգամ զիջում է ՀՀ, ինչպես նաև համեմատվող ԳԴՀ և Բադեն-Վյուրտենբերգի հողի համապատասխան ցուցանիշին: ՀՀ-ում խաղողի բերքատվության մակարդակը հիմնականում գերազանցում է՝ Վայոց ձորի մարզին 2.2–3.5 (առանձին դեպքում՝ 5.5) անգամ, ԳԴՀ-ի և Բադեն-Վյուրտենբերգի հողի ցուցանիշին՝ 1.2–1.5 անգամ, զիջելով միայն որոշ տարիներին: Վերջինս մեր գնահատմամբ պայմանավորված է ՀՀ-ում մշակվող խաղողի բարձր բերքատու սորտերով, ինչպես նաև վիճակագրական հաշվառման բացթողումներով և երկու երկրների վիճակագրական հաշվառման մեթոդական տարբերությամբ:



	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
ՀՀ	141,2	153,6	128,0	144,9	151,5	158,0	151,3	149,8	157,7	188,2	110,0	141,4	120,1
Վայոց Ձորի մարզ	40,0	43,0	32,5	40,9	47,1	51,0	49,8	58,4	55,8	58,7	20,0	40,6	53,8
ԳԴՀ	121,6	138,0	133,4	121,4	93,9	123,4	121,3	112,8	122,4	118,1	120,6	121,2	121,5
Բադեն Վյուրտեմբերգ նահանգ	166,6	129,7	125,0	114,4	93,0	118,5	115,6	99,9	117,7	111,9	122,1	123,5	123,6

Գծապատկեր 7. **Խաղողի բերքատվության մակարդակները ՀՀ-ում, ՀՀ Վայոց ձորի մարզում, ԳԴՀ-ում և ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգի հողում** 2006-2018**թ.** (Statistisches Bundesamt, https://www.destatis.de, «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը», վիճակագրական տեղեկագրեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2009-2018թթ.)

Ուսումնասիրվող տարիներին ՀՀ-ում և ԳԴՀ-ում, բացի Վայոց ձորի մարզից, խաղողի այգետարածքները, համախառն բերքը և բերքատվության մակարդակն ունեցել է անկայուն դինամիկա, և այդ ժամանակային շարքերի տրենդները ներկայացվել են երկրորդ կարգի կորերով: Ըստ տրենդը ներկայացնող մոդելի, ՀՀ-ում խաղողի տարածությունները տարեկան միջին հաշվով ավելացել են 579.8 հա, իսկ համախառն բերքը՝ 22510 տ, սակայն դրանք բնութագրվել են տեմպերի դանդաղեցմամբ: Արդյունքում բերքատվությունը տարեկան ավելացել է 9.15 g/հա, սակայն դա նույնպես ունեցել է տեմպերի դանդաղեցում:

Տրենդը ներկայացնող մոդելի համաձայն, 2006-2018թթ. Վայոց ձորի մարզում խաղողի այգետարածքները տարեկան միջին հաշվով ավելացել են 28.1 հա, համախառն բերքը՝ 488 տ, բերքատվությունը՝ 4.45 g/հա, սակայն բնութագրվել են տեմպերի դանդաղեցմամբ:

Ըստ մասնակի էլաստիկության գործակիցների ($Э_1 = 0.00002; Э_2 = 0.008$) հաշվարկված արժեքների, Վայոց ձորի մարզում խաղողի համախառն բերքի, տարածքի և բերքատվության մակարդակի միջև փոխկախվածությունները էլաստիկ չեն: Ուսումնասիրվող ժամանակահատվածում մարզում խաղողի համախառն բերքի վրա բերքատվության մակարդակի փոփոխությունն ավելի էականորեն է ազդել, քան այգետարածքների փոփոխությունը:

Հաշվարկված դետերմինացիայի գործակիցի ($R^2_{yx1x2} = 0.995$) համաձայն, այդ տարիներին Վայոց ձորում խաղողի համախառն բերքի տատանումների շուրջ 99.5 %-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոններով:

Ըստ մասնակի էլաստիկության հաշվարկված գործակիցների, ԳԴՀ-ում խաղողի այգետարածքների 1% ավելացումը համախառն բերքն ավելացրել է 0.99%-ով ($Э_1 = 0.99$), իսկ խաղողի բերքատվության 1% ավելացումը՝ 1.001%-ով ($Э_2 = 1.001$):

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ԳԴՀ-ում խաղողի համախառն բերքի վրա բերքատվության մակարդակի փոփոխությունն ունեցել է նշանակալի ազդեցություն, քան այգետարածքների փոփոխությունը: Հաշվարկված դետերմինացիայի գործակցի ($R^2_{yx1x2} = 0.998$) համաձայն, այդ տարիներին ԳԴՀ-ում խաղողի համախառն բերքի տատանումների շուրջ 99.8 %-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոններով:

Այսպիսով, տնտեսաչափական վերլուծությամբ պարզ դարձավ, որ ՀՀ-ի և Վայոց ձորի մարզի, ԳԴՀ-ի և Բադեն Վյուրտենբերգի հողի խաղողագործության ճյուղերի զարգացման վրա էական ազդեցություն ունի բերքատվության մակարդակը: Հետևաբար Վայոց ձորում խաղողագործության զարգացման հիմնական ուղղությունը պետք է հանդիսանա ինտենսիվության մակարդակի բարձրացումը:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացվել են նաև խաղողագործության զարգացման հիմնական ուղղությունները ՀՀ Վայոց ձորի մարզում: Մեր կողմից ուսումնասիրվել են ինչպես ՀՀ Վայոց ձորի մարզի, այնպես էլ Գերմանիայի դաշնության Բադեն-Վյուրտենբերգ հողի խաղողագործության ոլորտները և դրանցում առկա խնդիրները: Ըստ այդմ Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման խնդիրների լուծման հիմնական ուղղություններն առաջադրվել են ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգ հողի խաղողագործության ոլորտում կիրառվող այն ինովացիաների ու ոլորտի կարգավորման մոտեցումների ներդրման համատեքստում, որոնք, ըստ մեր գնահատման, իրատեսական կարող են լինել մարզում ներդնելու առումով:

Դրանք, ընդհանուր առմամբ հետևյալն են.

1. Տրակտորների GPS և ուլտրաձայնային կառավարման համակարգի ներդրում:
2. Խաղողի այգիների հիմնման գործընթացի օպտիմալացման համար CoGIS Rebpflanzenmodul ծրագրային համակարգի ներդրում:
3. Զոնայավորված քարտեզների ստեղծում:
4. Եղանակի տեղեկատվական կայանների ներդրում և կիրառություն:
5. Խաղողագինեգործության ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին ուղղվող պետական աջակցության ծրագրերի կատարելագործում:
6. Խաղողի և գինու գնագոյացման պետական կարգավորում:
7. Խաղողագործական տնտեսությունների պայմանագրային հարաբերությունների կատարելագործում:
8. Խաղողի իրացման գործընթացի կատարելագործում:

ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության ճյուղում ստեղծված վիճակի բարելավման և ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգի հողի խաղողագործության զարգացման փորձի ներդրման հնարավորությունների ստեղծման առումով ռացիոնալ և հեռանկարային լուծում կարող է հանդիսանալ խաղողագինեգործական համալիրի տնտեսվարող սուբյեկտների բազմակողմ ինտեգրացիոն գործընթացների խորացումն ու

զարգացումը: Այս առումով, խոսքն առաջին հերթին վերաբերում է խաղողագործության ճյուղում կլաստերիզացիայի զարգացմանը, ինչը կարող է ճյուղի կայուն և արմատական զարգացման լրջագույն գործոն և նախապայման հանդիսանալ: Մեր գնահատմամբ, խաղողագինեգործական կլաստերների ձևավորմամբ իրական հնարավորություններ կարող են ստեղծվել ճյուղի զարգացման մասշտաբային միջոցառումների իրականացման նախադրյալների ստեղծման առումով: Մասնավորապես, կլաստերների ձևավորումը հնարավորություն կստեղծի միավորել բոլոր ռեսուրսները և համագործակցված գործունեության պայմաններում ապահովել բարձր տնտեսական արդյունավետություն:

Մեր համոզմամբ, ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագինեգործության զարգացման առումով կլաստերների ձևավորումը, պարզապես ժամանակի օբյեկտիվ պահանջ է, քանի որ վերջինս հնարավորություն է տալիս ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտներին միավորվել համընդհանուր տնտեսական հետաքրքրությունների շրջանակներում: Կլաստերի պայմաններում հնարավորություն է ստեղծվում ռեսուրսների միավորման շնորհիվ լիարժեք ինտեգրվել և լայնորեն կիրառել ոլորտի նորամուծությունները: Միաժամանակ, գտնում ենք, որ մարզում կլաստերների ձևավորման ու զարգացման գործընթացի պատշաճ իրականացման հիմք պետք է հանդիսանա տարածքային զարգացման հատուկ քաղաքականության մշակումն ու իրականացումը, իսկ կառավարման մարմինների գործողությունները պետք է ուղղվեն ոչ թե առանձին տնտեսավարող սուբյեկտներին աջակցության ծրագրերում, այլ գլխավորապես տնտեսավարող սուբյեկտների և պետական ինստիտուտների միջև համագործակցության խորացմանն ու զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության սահմաններում կատարված ուսումնասիրությունների արդյունքով բացահայտվել են ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման հիմնախնդիրները, վերլուծվել և գնահատվել է մարզում խաղողագինեգործական համալիրի զարգացման տեմպերն ու առկա ներուժը, որից ելնելով՝ ատենախոսության թեմայի շրջանակներում կատարվել է որոշակի եզրակացություններ:

1. Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ Հանրապետությունում խաղողագործության զարգացման բեկումնային տարի կարելի է համարել 2004 թվականը: Չնայած այդ տարվա գարնանային ցրտահարություններին, խաղողի համախառն բերքը կազմեց 148900 տ և առաջին անգամ գերազանցեց 1990թ. գրանցված համախառն բերքի ցուցանիշը 5600 տոննայով (3.9%), իսկ 2000թ. ցուցանիշը՝ 33100 տոննայով՝ 1300 հա պակաս այգետարածքների պայմաններում: Հատկանշական է, որ 1990 թ-ից հետո առաջին անգամ կասեցվեց խաղողի այգետարածքների կրճատման միտումը: Ավելին, 2004 թ.՝ 2003 թ-ի նկատմամբ խաղողի այգետարածքներն ավելացան 1900 հա-ով (14.6%): Բացի այդ խաղողի համախառն բերքի ավելացումն առաջին անգամ ապահովվեց, ինչպես բերքատվության մակարդակի շուրջ 77.3%-ով բարձրացման, այնպես էլ՝ այգե-

տարածքների շուրջ 22.7%-ով ավելացման հաշվին: 1990 թ-ից հետո 15 տարի անց՝ 2004թ. գրանցվեց միջին բերքատվության ամենաբարձր մակարդակը՝ 108.9 g/հա, ինչը 1990 թ. ցուցանիշից բարձր էր 2.2 անգամ:

2. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խաղողի միջին բերքատվության ցուցանիշներն ըստ մարզերի էապես տարբերվում են: 2017 թ. տվյալներով ՀՀ մարզերից բերքատվության մակարդակով առաջատարը Արարատի մարզն է՝ 209,3 g/հա: Հատկանշական է, որ նշված ցուցանիշով Արարատի մարզը գերազանցում է Արագածոտնի, Կոտայքի, Տավուշի մարզերի և Երևանի խաղողագործական շրջանների նույն ցուցանիշին շուրջ 3 անգամ, Սյունիքի, Վայոց ձորի և Լոռվա մարզերի՝ 4,5-5 անգամ, իսկ զարգացած խաղողագործական մարզին՝ Արմավիրին շուրջ 1,5 անգամ: 2017 թ. տվյալներով ՀՀ խաղողի համախառն բերքի կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը զբաղեցնում է Արարատի մարզը՝ 45.3%, իսկ Արմավիրի մարզը, թեև շուրջ 2000 հա-ով ավելի խաղողի այգետարածքներ ունի, համախառն բերքի ցուցանիշով Արարատի մարզից հետո զբաղեցնում է 2-րդ տեղը՝ 43.0%:
3. Խաղողի այգետարածքով ՀՀ մարզերից առաջատար է Արմավիրը՝ 42.9%, որը նշված ցուցանիշով էապես գերազանցում է հանրապետության մյուս մարզերին: Բավական է նշել, որ Արմավիրի մարզը խաղողի այգետարածքների տեսակարար կշռով 2-րդ տեղում գտնվող Արարատի մարզին գերազանցում է շուրջ 1.4 անգամ, մինչդեռ վերջինս համախառն բերքի ցուցանիշով համարվում է հանրապետության առաջատարը: Փաստորեն, Արմավիրի և Արարատի մարզերի խաղողի այգետարածքի մասնաբաժինը հանրապետության խաղողի այգիների ընդհանուր կառուցվածքում կազմում է շուրջ 72.7%, նշված ցուցանիշով 3-րդ, 4-րդ և 5-րդ տեղերը զբաղեցնում են Տավուշի, Արագածոտնի և Վայոց ձորի մարզերը, համապատասխանաբար՝ 8.5, 7.9 և 7.6%: Մյուս մարզերը՝ Կոտայքի, Սյունիքի, Լոռու մարզերը և Երևանի խաղողագործական շրջանը, որտեղ առկա են խաղողի այգետարածքներ, զբաղեցնում են հանրապետության խաղողի այգետարածքների ընդամենը 3.2%-ը, իսկ Շիրակի և Գեղարքունիքի մարզերում խաղողի այգետարածքներն ընդհանրապես բացակայում են՝ պայմանավորված խաղողի մշակության համար կլիմայական աննպաստավոր պայմաններով:
4. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինչպես գյուղացիական տընտեսությունների կողմից բոլոր ուղիներով իրացված գյուղմթերքի գների միջին մակարդակը, այնպես էլ՝ մանրածախ գների մակարդակը վերջին հինգ տարիների ընթացքում ունեցել են տատանողական բնույթ: Հարկ է նշել, որ խաղողի մանրածախ գները բոլոր ուղիներով իրացված միջին գներին գերազանցում են մի քանի անգամ, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ խաղողի համախառն արտադրանքի շուրջ 70%-ը մթերվում է վերամշակող կազմակերպությունների կողմից ցածր գներով, իսկ մնացած 30%-ի մեծ մասը մտնում է ապրանքաշրջանառության ոլորտ, մասնավորապես մանրածախ առևտրի ոլորտ, որտեղ իրացման գներն էապես գերազանցում են վերամշակման համար մթերված խաղողի գներին: Բացի այդ, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ

տարվա տարբեր ամիսների ընթացքում սառնարանային պայմաններում պահպանվող խաղողը վաճառվում է սեզոնային գներից էապես բարձր գներով, ապա դրանով էլ հիմնականում բացատրվում է երկրում խաղողի մանրածախ գնի և բոլոր ուղիներով իրացման միջին գնի միջև հարաբերակցության այդքան բարձր մակարդակը: Նշված գործոններին գումարվում է նաև այն, որ շուկայական կառուցակարգերի վրա որոշակիորեն ազդում է խաղողի արտահանման ծավալների աճի միտումը, ինչը բացասական է ազդում ներքին շուկայում խաղողի գների ձևավորման վրա:

5. ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների առկայության և օգտագործման ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզում առկա է լրջագույն խնդիր գյուղատընտեսության բոլոր հիմնական ռեսուրսների գծով: Ըստ էության, չափազանց անբավարար կարելի է գնահատել հողօգտագործման վիճակը մարզում, քանի որ ցածր է գյուղատնտեսական հիմնական հողատեսքերի օգտագործման մակարդակը, այդ թվում՝ վարելահողերի: Մարզում աշխատանքային ռեսուրսների ընդհանուր զբաղվածության կառուցվածքում գնալով նվազում է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների մասնաբաժինը, ինչը բացատրվում է հիմնականում այն հանգամանքով, որ աստիճանաբար գյուղատնտեսության ոլորտը մարզում դառնում է էլ ավելի ոչ գրավիչ գործունեության ոլորտ: Մարզում գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների օգտագործման բարելավման ուղղությամբ կարևոր ենք համարել պետական նպատակաուղղված քաղաքականության իրականացումը համապատասխան աջակցության ծրագրերի գործիքակազմով, մասնավորապես՝ գյուղատնտեսության նախընտրելի մասնագիտացման կատարելագործում, հողաբարելավման միջոցառումների իրականացում, հատկապես քարքարոտ և անհարթ հողերի բարելավման աշխատանքներ, ոռոգման համակարգերի վերականգնում և արդիականացում, ոռոգման նոր ջրագծերի կառուցում:
6. ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագինեգործական ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների արտադրատնտեսական գործունեության վրա էական ազդեցություն ունեցող արտաքին և ներքին միջավայրերի գործոնների ուսումնասիրության և համակողմանի վերլուծության նպատակով կատարվել է SWOT վերլուծություն, որի իրականացման համար հիմք են ծառայել մարզում գործող խաղողագործության և գինեգործության ոլորտում տընտեսվարող սուբյեկտների շրջանում մեր կողմից կատարված հարցումների, հետազոտությունների և տարբեր մասնագիտական ու գիտական հրապարակումների վերլուծության արդյունքները: Նշված հետազոտությունները հնարավորություն են տվել բացահայտելու ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագինեգործական համալիրի հիմնախնդիրները, ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև առկա սպառնալիքների համատեքստում համակողմանիորեն գնահատելու ոլորտի զարգացման հնարավորությունները:
7. 2006-2018թթ. ՀՀ Վայոց ձորի և ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգի մարզերի խաղողագործության հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծության արդյունքում բացահայտվել է հիմնական ցուցանիշների զարգացման և փոխկախվա-

ծությունների օրինաչափությունները: Ըստ տրենդը ներկայացնող մոդելի, 2006-2018թթ. Վայոց ձորի մարզում խաղողի տարածությունները տարեկան միջին հաշվով ավելացել են 28.1 հա: Խաղողի համախառն բերքը տարեկան միջին հաշվով ավելացել է 488 տ, սակայն բնութագրվել է տեմպերի դանդաղեցմամբ: Վայոց ձորի մարզում խաղողի բերքատվության մակարդակը տարեկան միջին հաշվով բարձրացել է 4.45 գ/հա, որը ունեցել է դանդաղեցման բնույթ: Միմյանց համեմատելով ՀՀ-ում և ԳԴՀ-ում խաղողի արտադրության հիմնական ցուցանիշների զարգացման միտումները՝ նկատվում է, որ ՀՀ-ում և Վայոց ձորի մարզում խաղողի տարածությունների, համախառն բերքի և բերքատվության ցուցանիշները տարեկան ունեցել են աճի միտումներ, սակայն բնութագրվել են դանդաղեցման տեմպերով, որը կհանգեցնի նշված ցուցանիշների փաստացի կրճատմանը: ԳԴՀ-ում և Բադեն Վյուրտեմբերգի Հողում խաղողի արտադրության հիմնական ցուցանիշները ուսումնասիրվող տարիներին ունեցել են կրճատման միտումներ, սակայն դրանք բնութագրվել են աճի տեմպերի արագացմամբ, որը հաջորդող տարիներին կհանգեցնի խաղողի համախառն բերքի և բերքատվության մակարդակի կայուն աճի տեմպերին:

8. Կիրառելով ռեգրեսիոն կոռելյացիոն մեթոդը 2006-2018թթ. ժամանակահատվածի կտրվածքով բացահայտվել է ՀՀ-ում, Վայոց ձորի մարզում, ԳԴՀ-ում և Բադեն Վյուրտեմբերգ հողում խաղողի համախառն բերքի վրա բերքատվության մակարդակի և տարածությունների ազդեցությունը: Կատարված վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ Վայոց ձորի մարզում խաղողի համախառն բերքի, այգետարածքների և բերքատվության մակարդակի միջև կառուցված ռեգրեսիոն մոդելը նշանակալի է ($F = 1057.9 > F_{crit} = 4.1$), ինչպես նաև նշանակալի են ստացված ռեգրեսիայի գործակիցները ($t_{b1} = 16.5; t_{b2} = 38.6 > t_{crit} = 2.22$): Ուսումնասիրվող երևույթների միջև կապը շատ ուժեղ է ($R_{yx1x2} = 0.997$): Համաձայն կառուցված եռաչափ ռեգրեսիոն մոդելի, 2006-2018թթ. Վայոց ձորի մարզում խաղողի տարածությունների մեկ հեկտարով ավելացման հետ զուգահեռ համախառն բերքը ավելացել է 4.0 տ ($a_1 = 0.004$), իսկ բերքատվության մակարդակի մեկ գ/հա ավելացման հետ զուգահեռ խաղողի համախառն բերքը ավելացել է 94 տ ($a_2 = 0.094$): Հաշվարկված մասնակի էլաստիկության գործակիցները ցույց են տալիս, որ Վայոց ձորի մարզում խաղողի համախառն բերքի, տարածության և բերքատվության մակարդակի միջև փոխկախվածությունները էլաստիկ չեն ($Э_1 = 0.00002; Э_2 = 0.008$): Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Վայոց ձորի մարզում խաղողի համախառն բերքի վրա բերքատվության մակարդակի փոփոխությունն ավելի էականորեն է ազդում, քան տարածությունների փոփոխությունը: Ինչպես ցույց է տվել հաշվարկված դետերմինացիայի գործակիցը, ուսումնասիրվող տարիներին Վայոց ձորի մարզում խաղողի համախառն բերքի տատանումների շուրջ 99.5%-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոններով ($R^2_{yx1x2} = 0.995$):

9. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել են ինչպես ՀՀ Վայոց ձորի մարզի, այնպես էլ Գերմանիայի դաշնային Հանրապետության Բադեն-Վյուրտենբերգ հողի խաղողագործության ոլորտները և դրանցում առկա հիմնախնդիրները, հետևաբար Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները առաջադրվել են Գերմանիայի Դաշնության Բադեն-Վյուրտենբերգի Հողի խաղողագործության ոլորտում կիրառվող այն ինովացիաների ու ոլորտի կարգավորման մոտեցումների ներդրման համատեքստում, որոնք, ըստ մեր գնահատման, իրատեսական կարող են լինել մարզում ներդնելու առումով: Մասնավորապես, ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության զարգացման հիմնախնդիրների լուծման համատեքստում դիտարկվել են հետևյալ հիմնական ուղղությունները՝ տրակտորների GPS և ուլտրաձայնային համակարգի ներդրում, խաղողի այգիների հիմնման գործընթացի օպտիմալացման համար CoGIS Rebpflanzenmodul ծրագրային համակարգի ներդրում, զոնայավորված քարտեզների ստեղծում, եղանակի տեղեկատվական կայանների ներդրում և կիրառություն, խաղողագինեգործության ոլորտի տնտեսվարող սուբյեկտներին ուղղվող պետական աջակցության ծրագրերի կատարելագործում, խաղողի և գինու գնագոյացման պետական կարգավորում, խաղողագործական տնտեսությունների պայմանագրային հարաբերությունների կատարելագործում, խաղողի իրացման գործընթացի կատարելագործում: Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ նշված ուղղություններով մարզում խաղողագործության հեռանկարային զարգացումն ապահովելն իրատեսական կարող է լինել միայն որոշակի նախադրյալների առկայության պայմաններում: Մասնավորապես, մարզի խաղողագինեգործական համալիրում առկա են ինովացիաների կիրառմանը խոչնդոտող բազմաթիվ գործոններ, որոնցից հիմնականներն ըստ մեզ ֆինանսական ռեսուրսների անբավարարությունն ու տնտեսությունների չափազանց փոքր չափերն են:
10. Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագործության ճյուղում ստեղծված վիճակի բարելավման և ԳԴՀ Բադեն-Վյուրտենբերգի Հողի խաղողագործության զարգացման փորձի ներդրման հնարավորությունների ստեղծման համատեքստում ռացիոնալ և հեռանկարային լուծում կարող է հանդիսանալ խաղողագինեգործական համալիրի տնտեսավարող սուբյեկտների բազմակողմ ինտեգրացիոն գործընթացների խորացումն ու զարգացումը: Նշված համատեքստում, խոսքն առաջին հերթին վերաբերում է խաղողագործության ճյուղում կլաստերիզացիայի զարգացմանը, ինչը կարող է լրջագույն գործոն և նախապայման հանդիսանալ խաղողագործության ճյուղի կայուն և արմատական զարգացման համար: Մեր գնահատմամբ, խաղողագինեգործական կլաստերների ձևավորմամբ իրական հնարավորություններ կարող են ստեղծվել ճյուղի զարգացման մասշտաբային միջոցառումների իրականացման առումով: Մասնավորապես, կլաստերների ձևավորումը հնարավորություն կտա միավորել բոլոր ռեսուրսները և համագործակցված գործունեության պայմաններում ապահովել բարձր տնտեսական արդյունավետություն: Մեր համոզ-

մամբ, ՀՀ Վայոց ձորի մարզի խաղողագինեգործության զարգացման առումով կլաստերների ձևավորումը պարզապես ժամանակի օբյեկտիվ պահանջ է, քանի որ վերջինս հնարավորություն է տալիս ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտներին միավորվել համընդհանուր տնտեսական հետաքրքրությունների շրջանակներում: Կլաստերի պայմաններում հնարավորություն է ստեղծվում ռեսուրսների միավորման շնորհիվ լիարժեք ինտեգրվել և լայնորեն կիրառել ոլորտի նորամուծությունները:

11. Վայոց ձորի մարզում խաղողագործության նախընտրելի մասնագիտացմանը, մասնավորապես Արենի սորտի խաղողի մշակության առավել տարածմանն ու զարգացմանը նպաստող կառուցակարգերի մշակման շրջանակներում կարևոր ենք համարել պետական աջակցության տարբերակված ծրագրերի մշակումն ու իրագործումը, ինչը մեր համոզմամբ խիստ հրատապ է մարզում խաղողագործության զարգացման և ռեսուրսային ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման համատեքստում: Մասնավորապես, որոշակի կոնկրետ սորտի խաղողի մշակության պարագայում՝ պետական աջակցության տարբերակված կառուցակարգերի շրջանակներում, նպատակահարմար ենք համարում ոռոգման ջրի վարձավճարի և նյութատեխնիկական ռեսուրսների ձեռքբերման արտոնյալ սուբսիդավորման կառուցակարգերի, ինչպես նաև աջակցության ծրագրերի մշակումը կապված խաղողի մթերման երկարատև պայմանագրերի կնքման գործընթացին աջակցության և գնագոյացման կառուցակարգերի բարելավման, մասնավորապես երաշխիքային գների սահմանման հետ: Առաջարկվում է, որպեսզի, ԳԴՀ Բադեն Վյուրտենբերգ Հողի փորձից ելնելով, Վայոց ձորի մարզում նույնպես իրականացվող տարբերակված նպատակային պետական աջակցության ծրագրերի հիմքում ընկած լինի պայմանագրային հարաբերություններով կարգավորվող պարտավորությունների շրջանակը, որտեղ հըստակ նշված կլինի, որ տվյալ խաղողագործական տնտեսությունն այդ հատուկ ծրագրերից կարող է օգտվել բացառապես այն դեպքում, եթե ստանձնի պարտավորվածություն նոր հիմնըված խաղողի այգին առնվազն 25 տարի պատշաճ կերպով մշակելու:

Ատենախոսության հիմնական դրույթները և ստացված արդյունքները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. А. С. Тамоян, Экономический анализ состояния виноградарства в Республике Армения, Аграрная экономика России: проблемы и векторы развития: монография Краснодар 2018 с. 84-91.
2. Թամոյան Հ. Ս. - Խաղողագործության վիճակը և զարգացման միտումները ՀՀ Վայոց Ձորի մարզում, ՀԱԱՀ Ագրոգիտություն եվ տեխնոլոգիա 2/66 Երևան 2019թ. 38-42 էջ:

3. Ղազարյան Է.Ս., Թամոյան Հ. Ս. - Խաղողագինեգործական արտադրանքի շուկան եվ տնտեսական նշանակությունը Հայաստանում, ՀԱԱՀ Ագրոգիտություն եվ տեխնոլոգիա 2/66 Երևան 2019թ. 42-46 էջ:
4. Թամոյան Հ. Ս. - Վայոց Ձորի մարզի բնատնտեսական պայմանները և դրանց նպաստավորությունը խաղողագործության զարգացման համար, Այլընտրանք գիտական հանդես N2 Երևան 2019թ. 165-173 էջ:
5. Ալեքսանյան Վ.Ս., Թամոյան Հ. Ս. - Խաղողագործության զարգացման հիմնախնդիրները ՀՀ Վայոց Ձորի մարզում, Այլընտրանք գիտական հանդես N2 Երևան 2019թ. 174-184 էջ:
6. Թամոյան Հ. Ս. - ՀՀ Վայոց ձորի մարզի և ԳԴՀ Բադեն Վյուրտենբերգի հողի խաղողագործության հիմնական ցուցանիշների տնտեսաչափական վերլուծությունը, Այլընտրանք գիտական հանդես N3 Երևան 2019թ. 67-76 էջ:
7. Ալեքսանյան Վ.Ս., Թամոյան Հ. Ս. - Խաղողագործության զարգացման հիմնական ուղղությունները ՀՀ Վայոց ձորի մարզում, Այլընտրանք գիտական հանդես N3 Երևան 2019թ. 77-87 էջ:
8. Э. С. Казарян, В. С. Алексанян, А. С. Тамоян, Эконометрический анализ взаимосвязи между площадью виноградников, валовым урожаем и уровнем урожайности винограда в Вайоц Дзорском Марзе республики Армения, НИИ ИЭП Экономико-правовые и социально-культурные аспекты взаимодействия и сотрудничества в интеграционном обществе Москва 2019 с. 88-91.

ТАМОЯН АРУТЮН САМВЕЛОВИЧ

ПУТИ РЕШЕНИЯ ПРОБЛЕМ РАЗВИТИЯ ВИНОГРАДАРСТВА (ПО МАТЕРИАЛАМ ВАЙОЦ ДЗОРСКОГО МАРЗА РА И БАДЕН-ВУРТЕНБЕРГСКОЙ ЗЕМЛИ ФЕДЕРАЛЬНОЙ РЕПУБЛИКИ ГЕРМАНИИ)

Автореферат дисертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика и управление хозяйством, его сферами»

Публичная защита диссертации состоится ..... 2019 года в ... часов на заседании Специализированного Совета 002 по экономике ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, Ереван, ул. Теряна 74.

РЕЗЮМЕ

Основной целью исследования является разработка соответствующих рекомендаций для развития виноградарства и виноделия марза Вайоц Дзор на основе анализа ситуации и выявления сушествующих проблем в Вайоц Дзорском марзе и Баден-Вюртембергской земле в Федеративной Республике Германии, который будет эффективно способствовать

развитию виноградарства в марзе за счет эффективного использования имеющихся ресурсов. Современное состояние развития виноградарства характеризуется низким уровнем интенсификации производственных процессов, финансовой нестабильностью производителей, высоким уровнем промышленных и экономических рисков, которые обуславливают негативные тенденции в показателях производства вина в стране. Решение этой проблемы требует внедрения эффективных процессов улучшения инфраструктуры и разработки фундаментальных механизмов их номинации.

В настоящее время, когда виноградарство и виноделие вступили в новую фазу развития после затяжного кризиса в Армении, в том числе в Вайоц Дзорском марзе, приоритетной задачей является выявление факторов, препятствующих развитию сектора, и разработка механизмов для его преодоления.

В целях развития виноградарства и повышения конкурентоспособности виноградарской-виноделской продукции на внутреннем и внешнем рынках, и важно повысить эффективность отраслей виноградарства и виноделия, чем обусловлено неотложность и актуальность диссертации.

Исследования и анализ, проведенные в диссертации, привели к ряду научных результатов, из которых следующие могут рассматриваться как научная новизна:

- На основе анализа динамики выявлены тенденции развития основных показателей и моделирования трендов их временных рядов в Федеративной Республике Германии и земли Баден-Вюртемберг, Республики Армения и марза Вайоц Дзор.
- Выявлены степень влияния площади садов и урожайности на урожай винограда Федеративной Республики Германии и Баден-Вюртемберга, а также урожай винограда в Республике Армения и марзе Вайоц Дзор и дана их эконометрическая оценка.
- Исследования в области виноградарства и SWOT-анализ Вайоц Дзорского марза выявили современные проблемы и обусловливающие факторы.
- На основе комплексной оценки и анализа существующих проблем в области виноградарства и комплексного экономического и ресурсного потенциала развития виноградарства в Вайоц Дзорском марзе разработаны основные направления перспективного развития отрасли.

В первой главе диссертации «Состояние виноградарского комплекса и проблемы развития в Республике Армения» представлены состояние виноградарства и тенденции развития Республики Армения, а также социально-экономическое значение производства виноградарства-виноделия.

Во второй главе «Предпосылки развития виноградарства в Вайоцдзорском марзе Республики Армения» представлена исследования комплекса виноградарства-виноделия Вайоцдзорского марза, а также дана оценка ресурсного потенциала сельского хозяйства и его использования, в благоприятных условиях марза для развития виноградарства.

В третьей главе диссертации «Перспективы развития виноградарства в Вайоцдзорском марзе Республики Армения» на основании SWOT-анализа представлены основные вопросы развития виноградарства в Вайоц Дзорском марзе Армении, кроме того, был проведен эконометрический анализ основных показателей марза Вайоц Дзор и ФРГ Баден-Вюртемберг. В результате чего намечены основные направления развития виноградарства в Вайоц Дзорском марзе.

Практическое применение результатов полученных в диссертации и предлагаемых механизмов будет способствовать развитию и повышению эффективности виноградников в Вайоц Дзорском марзе РА.

Практическая значимость диссертации заключается в том, что основные положения могут быть использованы в дальнейших экономических исследованиях в области виноградарства-виноделия, а также в качестве научно-методической базы для разработки нормативно-правовых документов, регулирующих производственно-экономические отношения виноградарского-виноделского комплекса.

TAMOYAN HARUTYUN SAMVEL

WAYS OF PROBLEM SOLVING FOR VITICULTURE DEVELOPMENT (REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR MARZ AND FEDERAL REPUBLIC OF GERMANY BADEN-WÜRTTEMBERG SOIL DATA)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of economics in the speciality 08.00.02 – «Economics and Management of Economy and its Spheres»

The defense of the thesis will take place on ..... 2019, ... o`clock at the Meeting of 002 specialized Council in Economics of SCC RA, operating at National Agrarian University of Armenia by address, 74 Teryan street, Yerevan, 0009

SUMMARY

The main objective of the research is to develop appropriate recommendations for the development of the Vayots Dzor region based on the analysis of the situation of the Vayots Dzor Marz and the Federal Land of Baden-Württemberg in the Federal Republic of Germany and to identify potential that will contribute to the development in the province.

The current state of viticulture development is described by a low level of intensification of production processes, financial instability of producers, high level of economic and economic risks, which affect the negative tendencies of the country's viticultural production indices. Solving this problem requires the implementation of effective infrastructure improvement processes and the development of basic mechanisms for their establishment.

Currently, as viticulture and winemaking have entered a new phase of development after the prolonged crisis in Armenia, including in Vayots Dzor region, identifying the factors hindering the development of the sector and developing mechanisms for overcoming it is a priority. In order to enhance the competitiveness of viticulture in the domestic and foreign markets, it is crucial to increase the efficiency of the viticulture and winemaking sectors, which is the reason for the urgency and actuality of the thesis.

The research and analysis carried out in the dissertation has led to a number of scientific results, from which the following can be considered as a scientific innovations:

- Trends of development have been identified based on the analysis of the dynamics of the key indicators of the Federal Republic of Germany and the Baden-Württemberg land, as well as of the Republic of Armenia and Vayots Dzor region.
- The extent of impact on the area and productivity of orchards and the level of productivity of the orchards on the land of the Federal Republic of Germany and Baden-Württemberg,

as well as the grape harvest of the Republic of Armenia and Vayots Dzor region were given and their econometric evaluation was given.

- As a result of studies in the field of viticulture and SWOT analysis of the Vayots Dzor Marz of the Republic of Armenia, the current problems and the factors that have caused them have been revealed.
- Based on a comprehensive assessment and analysis of the issues of viticulture in the Vayots Dzor region and a comprehensive assessment of the economic and resource potential of viticulture development in the region, the main directions of prospective development of the sector have been developed.
- The first section of the thesis, "The State of the Grape and Wine Complex and Development Issues in the Republic of Armenia", presents the state and trends of viticulture in the Republic of Armenia, as well as the socio-economic significance of grape production.
- The second section of the thesis, "Prerequisites for Viticulture Development in Vayots Dzor Marz of the Republic of Armenia" presented the agricultural resource potential of Vayots Dzor marz and its use, the study of the region's vine-growing complex, as well as the favorable conditions of the region for the development of viticulture.

The third section of the thesis, "Prospects for Viticulture in Vayots Dzor Marz of the Republic of Armenia" is based on the SWOT analysis and are represented the problems of viticulture development of Vayots Dzor region

Practical application of the results obtained from the dissertation and the proposed mechanisms will contribute to the development of Vineyards of the Republic of Armenia and to the increase of efficiency.

The practical significance of the dissertation is that the main points can be used in further economic research in the field of viticulture, as well as a scientific and methodological basis for the development of normative legal documents that regulate the industrial-economic relations of the viticultural complex.